

## Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վեշտասաներորդ դարու Հայ անծանօթ տաղասացներէն է Ջաքարիա, ծաղկած Աղթամարայ ջրաւէտ ափանց վրայ, ուսած եւ ապրած բանաստեղծ շրջանակի մը մէջ: Իր կենսագրութենէն ունինք բարեբախտութեամբ բաւականաչափ կարեւոր գծեր:

1. Հայրենեօք էր Ջաքարիա Բզնունեաց ափանց վրայ հաստատուած Խժիժ գիւղէն<sup>1</sup>, եւ ասկէ առեալ կը կոչուի «խժրժեցի». բնակութեամբն թէ դրացիութեամբն յայտնի չէ, իր կենաց համար նշանակալից եղած է լիմանապատն ալ, եւ կը յորջորջուի երբեմն «լմեցի»<sup>2</sup>: Ջաքարիա տոհմով կ'իջնար Հայոց

1 Հմմտ. վարը Թ. 1 տաղը: Խժիժ, այժմ Խժիժի կամ Խժիժի կոչուած, գիւղ մ'է, որ կը գտնուի «Վան-Տոսպ դաւառակի Թիմարայ մասին մէջ, Բզնունեաց ծովակի եզերքը, Ամկայ բերդին արեւելեան եւ Լմայ ջրհանի արեւմտեան կողմը: Ունի Ս. Ստեփանոս անուն եկեղեցի մը եւ 100էն աւելի տուն», ըստ Ս. Էփրէմեանի՝ Բնաշխարհիկ բաւարան, Բ. 169: Կամ ըստ Գ. Շիրեանի՝ Սրբավայրեր, տեղագրութիւն Վասպուրականի-Վանայ նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից եւ ուսումնարանաց, Տփղիս 1902, էջ 74, Կոուց կղզւոյ Ալիւր գիւղի շուրջն գտնուող 4 գիւղերէն մին է:

2 Հմմտ. վարը Թ. 4 տաղը: